Հրազդանի կիրճում արկածային ժամանցասպորտային կենտրոնի ներդրումային ծրագիր

Ծրագրի նկարագիր

Ծրագրի նպատակն է Հրազդան գետի կիրճում ստեղծել արկածային զբոսաշրջության կենտրոն, որտեղ կկազմակերպվի մայրաքաղաքի բնակչության և հյուրերի ակտիվ հանգիստը, կնախատեսվի էքստրեմալ թիավարություն, հրաձգություն, նետաձգություն և ժայռամագլցում մարզաձևերով զբաղվելու համար համապատասխան պայմաններ, ինչը կխթանի մայրաքաղաքում առողջ ապրելակերպը: Ծրագրով նախատեսվում է ներդնել արկածային տուրիզմի առաջատար ուղղություններից մեկը՝ Զիփ-Լայնը: Այն կառաջարկի թռիչքի նոր և հետաքրքիր ձև՝ հնարավորություն տալով թռչելու եղանակային բոլոր պայմաններին:
Հանգստյան գոտին նախատեսվում է կառուցել ավտոճանապարհի երկայնքով: Ծրագրով նախատեսվում է հետաքրքրություն ստեղծել բոլոր տարիքային խմբերի համար:

Ծրագիրը կներառի՝
- Հրազդան գետի վրա էքստրեմալ թիավարության 1-1,5 կմ երկարությամբ խոչընդոտներով գետուղի, որի համար անհրաժեշտ է գետի հունի ուսումնասիրություն, մաքրման աշխատանքներ, ջրահոսքի արագացում, ափերի ամրացում, ջրաֆիլտրերի տեղադրում, էլինգի և արհեստական խոչընդոտների կառուցում, նստարանների տեղադրում գետափի առաջարկված տարածքի երկարությամբ,
- Ժայռամագլցման ուղի,
- Հրաձգարան ,

- Նետաձգարան,
- Մարզասարքերով հագեցած բացօթյա մարզահրապարակ,

- Զիփ-լայն,
- Մարզատրամաբանական խաղերի և մարզագույքի վարձույթի տաղավարներ,
- Վրանային ավան /քեմփինգ/, նաև տնակային հյուրանոց ծառերի վրա,
-Ամբողջ տարածքի կանաչապատում, ձևավորում, լուսավորության անցկացում:



Տեխնիկական ցուցանիշներ

Հանգստի գոտու շերտի հաշվարկային երկարությունը 1,5 կմ:




Ծրագրի ժամկետներ

Ծրագրի իրականացման ժամկետը 3 տարի է:

Ծրագրի արժեքը

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 0,6 մլն. ԱՄՆ դոլար: Հնարավոր է ծրագիրն իրականացնել նաև փուլային տարբերակով: 1-ին փուլում նախատեսվում է իրականացնել հիմնական ժամանցասպորտային հատվածը:

Ներդրումների ձևը և հիմնական պայմանները

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնք-մասնավոր համագործակցության շրջանակում:

Ներկա իրավիճակ Առկա է կառուցապատման էսքիզային նախագիծ: